

Այսպիսով, ծովագետ Մաթիէօն Հետզետէ դա-
տարաններ կազմակերպելու են եւ գաւառնե-
րու մէջ Եթոյ կայ, որ մարդասիրական այդ շար-
քով տարածվի եւ ամբողջ եւրոպայում եւ
միջամարտութեան վայրերի սովորութիւնը
հետզետէ ջնջվի:

Փետրուար ամիսը՝ կարելի է ասել, գրական
մեծ տոնախմբութեան ամիս եղաւ Յրանսիայի
եւ Ռուսաստանի համար: Յրանսիայի ամենամեծ
քաղաքով տոնեցիր ամենամեծ բանաստեղծի ծննդ-
ւան հարիւրամեակը: Այդ առիթով ֆրանսի-
ական սենատը հետեւեալ որոշումն ընդ-
նդեց. ինչպէս յայտնի է, Վ. Հիւգօն սենատի
անդամ էր. նրա մահովանից յետոյ ոչ ոք չընտրե-
րանք նրա աթոռի յաջորդ: ոչ մի ֆրանսիացի
իրան արժանի չը համարեց բազմել այն աթոռի
վրայ, ուր նստել էր Վ. Հիւգօն: Այժմ սենատը
որոշեց պիտանայ մի տախտակ մարտացնել Վ.
Հիւգօյի աթոռի վրայ, որպէս զի տախտակի
վրայ քանդակված նրա անունը յիշեցնէ սենա-
տին, որ Վ. Հիւգօն միշտ ներկայ է եւ
Յրանսիայի մշտնջենաւոր, անմահ սենատորն է:

Վիկտոր Հիւգօյի հարիւրամեակի տոնախմբու-
թիւնը գրական բաւական մեծ նորութիւններ
տալով բերեց: Կայանա-Լէվի հրատարակիչը
բայ ընծայեց «Վերջին Ծիւղ» վերնագրով մեծ
բանաստեղծի մի աշխատութիւնը, գրված կեան-
քի վերջին տարիներու մի ժողովրդական լուսա-
ւորութեան միջնադարի հրատարակիչ
Կատիւ Միւսկի մի նշանաւոր աշխատութիւն-
նր, 600 էջերից բաղկացած, «Բանաստեղծական
շարքում» վերնագրով, որ ուսումնասիրում է
Հիւգօյի գործերը եւ հռչակում է նրա փառքը:
Վիկտոր Հիւգօն, ասում է Կատիւ Միւսկի,
ինքն լուսնաստեղծ-Յրանսիայի է. ուրիշ հանճար-
ները միայն իրանք են: Վիկտոր Հիւգօն՝ ամ-
բողջ ժողովուրդն է, վեհաքառ: Անշուշտ, նա
մի մարդ է, տարբեր մարդկանց ամբողջ մտա-
ծիւն, արտայայտելու, զգալու իր կարողու-
թիւններով, բայց այդ մարդը, այդ անհատը
ծնունդ է վերակազմում է մի ամբողջ մարդ-
կութիւն:

Նշանաւոր է եւ ակադեմիկոս Հանսօյի
Պանթիստի արտասանած ճառը, որ սկսվեց
այս խօսքերով: «Տասներկու տարի կայ, որ
Պանթիստի այս կամարների տակ, մարդը XIX
դարը տոնում էր ֆրանսիական յեղափոխու-
թեան հարիւրամեակը: Այսօր, XX դարը, իր
արդարյան, տոնում է մի բանաստեղծի հա-
րիւրամեակը: Տօնելով այս նոր հարիւրամեակը,
Յրանսիայի տոնում է գրականութիւնը: Գրա-
կանութիւնը հռչակում է Յրանսիայի ճորտ մեծ
դարերը բերին նրա համար մի այնպիսի անօրի-
նակ հեղինակութիւն մտքի չըմանում, որ երբ
այսօր նա համաշխարհային յարգանք է մատու-
ցում: Եւ այն մարդկանցից մէկին, որոնք ամենից
աւելի նպաստեցին այդ հեղինակութիւնը ձեռք
բերելու, նա իմաստուն կերպով շարժապարտ է
անցնելու ապագայի հետ»:

Յրանսիայի, ինչպէս անցեալ անգամ՝ նկատե-
լիքը, աստուածային պատիւներ տուեց Հիւգօյի
Հիւգօյին, նրա տոնախմբութիւնը արգարեւ
մտքի եւ գրականութեան համաշխարհային տո-
նախմբութիւնն է:

Ռուսաստանը եւս տոնեց իր գեղարուեստ
գրականութեան ամենամեծ ներկայացուցիչնե-
րից մէկին, Գոգօլին մահվան յիշատակելու Եթէ
Վ. Հիւգօն եղաւ բոմանտիզմի ամենափայլուն
ներկայացուցիչը Յրանսիայում, Գոգօլը եղաւ
աստուածային փայլուն դարձրելու ամենափայլուն
ներկայացուցիչը Ռուսաստանում: Նա առավել
փայլուն գոյներով նկարագրեց իսկական Ռուսաս-
տանը եւ արժանացաւ կոչվելու հայ: ուստաց
գրականութեան նատուրալական դարձրելու

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԱՅԻՑ

Մ ա ք ա յ ի ն հ ա ր ց ի շ ու ր ը Ը

Բերլին, փետրվարի 24-ին

Եթէ մի որ եւ է գերմանացույ հարցնելու
Եթէ մի թէ ներկայումս գերմանական ժողովրդի
համար որն է ամենահրատապ, ամենահետաքր-
քալարժ հասարակական հարցը, նա անշուշտ
հետախուզում է:

Մարքսային հարցը:

Եւ իսկապէս, մի ամբողջ տարուց աւելի է,
որ խօսվում ու գրվում այդ հարցի մասին,
բայց այնուամենայնիւ բանականորէ դեռ չէ դա-
րարել, վէճը դեռ չէ վերջացել: Ընդհանրապէս
այժմ պաշարն աւելի սուր կերպարանք է ստա-
նում եւ իւրաքանչիւր կուսակցութիւն վերջին
հիշում է թափում իր սկզբունքը պաշտպանելու,
որ ցանկութիւնն առաջ մղելու համար:

Դեռ անցեալ տարի գրել էի ժողովրդական
այն մեծ շարժման մասին, որ սկսվեց ամ-

բողջ Գերմանիայում բանտարկան դատարանի
պաշտպան սօցիալ-դեմոկրատիայի նախաձեռ-
նութեամբ:

Ամեն կողմ գումարում էին բազմամարդ
բողքաժողովներ, կազմվում էին բողքադերք-
հազարաւոր ու միլիոնաւոր ստորագրութիւն-
ներով ծածկված: Եւ այդ բողքի նպատակը
միայն մի պահանջ էր՝ չը թանգաջնել խեղճ
ժողովրդի ապրուստի ամենամահաբաժնու պի-
տեղները, չը բարձրացնել արտասահմանից ներ-
մուծվող գիւղատնտեսական մթերքների մաքուր
Բայց բողքովին այլ երգեր էին երգում ազ-
րարները իրանց թերթերում: Նրանք պահանջ-
ում էին բարձրացնել մաքուր, որպէս զի մայ-
րենի գիւղատնտեսութիւնը զարգանայ եւ դրա-
նով գիւղացիներն էլ չանկեն, բանւորներն էլ
(sic), ամբողջ ազգն էլ, պետութիւնն էլ...

Եւ մինչեւ օրս էլ այդ հին երգի ձայնը դեռ
հնչում է ագրարական թերթերից: Բայց այժմ
ագրարների հնարագիտութիւնն ու ազգային
արժանապատուութիւնը արդէն իր դազաթնա-
կետին է հասել եւ նրանք գիւտեր էլ են ա-
նում, գիւտեր, որով պէտք է փրկեն գերմա-
նական ժողովուրդը շատ ու շատ փորձանքնե-
րից:

Յայտնի է, որ գերմանացիները եւ յաղթան-
քում են եւ առողջակազմ. ուրեմն ինչպէս կա-
րող է պատահել, որ նրանց անասունները
վատառող լինեն: Ո՛հ Գերմանական եզն ու
կովը, խոզն ու ոչխարը—բողքն էլ եւ առող-
ջակազմ են, եւ անդաբար եւ համեղ իսկ ար-
տասանմանցի անասունները բողքն էլ հիւան-
դոտ են, ուստի եւ հարկաւոր է օր առաջ ազ-
գը վտանգից ազատել. հարկաւոր է փակել
սահմանադուրը եւ արտասահմանից ոչ մի ա-
նասուն ներս չընդունել:

Ահա այդ էր ուզում ասել ագրարական «Deut-
sche Tages-Zeitung» թերթը, խօսելով Աւստ-
րիայից ներմուծված տաւարի մասին եւ մառ-
նացոյց անելով, որ նրա մեծամասնութիւնը
համաճարակով վարակված է եղել ի հարկէ
փաստը արժանի էր ուշադրութեան, եթէ միայն
ձիւղ լինէր: Բայց պաշտօնական տեղեկութիւն-
ները ցոյց տուին, որ դա միայն մի երեւակա-
յական գիւտ է, որ իրականութեան հետ ոչ մի
կապ չունի, որ ընդհակառակը տեղական գեր-
մանական տաւարն է եղել ամենից շատ վա-
րակված:

Եւ դա միակ կեղծիքը, միակ աղաւաղումը
չէ, որ կատարում են ագրարները, իրանց յի-
տին նպատակն առաջ մղելու համար Այդպիսի
աղաւաղումների թիւը շատ մեծ է եւ, ըստ ե-
րևույթից, դեռ աւելի մեծանալու է, մինչեւ
որ մաքսային հարցը իր վերջնական լուծումն
ստանայ:

Իսկ այդ հարցը այժմ երկուսի մէջն է, այ-
սինքն քննվում է ռալիստադի կողմից ընտրված
մի յատուկ մասնաժողովում: Չափազանց դան-
դաղ են գնում այդ մասնաժողովի գործերը,
չափազանց աղմկալից են լինում նրա նիստերը:
Եւ ուրիշ կերպ չէր էլ կարելի սպասել քանի
որ հարցը դատակարարային միջոցն, գոյութեան
կուռի շուրջն է պտուղում:

Դեռ անցեալ աշուն սօցիալ-դեմոկրատները
րալիստադին յանձնեցին ժողովրդի բողքադ-
երը՝ մի քանի հակերով կապված—այնքան
բազմաթիւ էին: Կառավարութիւնը անկարող
էր բողքովին անուշադիր թողնել բազմամիլիոն
բողքաձայները: Նա իր անցեալ տարվայ ըն-
թացքից մի քայլ յետ գնաց եւ ընտրեց միջին
ճանապարհը, այսինքն մաքսային մի նոր սա-
կազմն մշակեց, որ աւելի պակաս է, քան թէ
ագրարների պահանջը: Ագրարներն էլ, անպատ-
պալմանները տեսնելով, քիչ չափա. որեցին ի-
րանց պահանջը: Այդպիսով ստացվեց հետեւեալ
պատկերը:

Այժմ իւրաքանչիւր կրկնակի ցնեմների հա-
մար վճարում են մաքս.

Ցորենին	3 1/2 մարկ
Գարուն	2 »
Կորեկին	3 1/2 »
Խոփուկ (Obel)	2 1/5 »

Կառավարութեան առաջարկն է առաջիկա-
յում բարձրացնել այդ մաքսը:

Ցորենին	5 1/2 մարկ
Գարուն	3 »
Կորեկին	5 »
Խոփուկ	5 »

Իսկ ագրարների իրր թէ չափաւորած պա-
հանջն է.

Ցորենին	6 մարկ
Գարուն	4 »
Կորեկին	5 1/2 »
Խոփուկ	5 1/2 »

Մասնաժողովի վերաբերմունքից եւ ընդհա-

նուր տրամադրութիւնից արդէն նկատվում է,
որ վերջ ի վերջոյ անցնելու է կառավարու-
թեան առաջարկը եւ ագրարները ուրախ են
դրա համար էլ, բայց նախօրոք «նազ ու գուզ»
են անում, որպէս զի յետոյ «մինաթ» գան
կառավարութեան վրայ իրանց կատարած quasi
զոհարեութեան համար եւ փոխարէնը ուրիշ
չնորհումներ պահանջեն:

Իսկ ժողովրդի արդար բողքը հաւանական-
րէն կը դառնայ «ձայն բարբառոյ յանապատի»,
թէ եւ նրա պաշտպան սօցիալ-դեմոկրատները,
աղաւաղումների հետ միացած շարունակում
են իրանց դեմադրութիւնը ընդդէմ մաքսային
սակազմի:

Ե. Թ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

—Մենք ստացանք Պարիզի հայոց բարեգոր-
ծական ընկերութեան նորընտիր վարչական ժո-
ղովի չըջարեալանք, որից երեւում է, որ
Պարիզի հայոց բարեգործական ընկերութիւնը
—գրեթէ անձնօթ մինչեւ այժմ—հիմնվել է
դեռ 1892-ին եւ հաստատվել ֆրանսիական
կառավարութեան կողմից 1893-ին: Իր գրեթէ
տասնամյա գոյութեան ընթացքում այդ ըն-
կերութիւնը ունեցել է մուտք 30,717 ֆրանկ,
որի մէջ 2000 ֆրանկ նպատակ Պարիզի թաղա-
պետական խորհրդից, այդ գումարն էլ ծախս-
ված է տուաւ տարվայ ընթացքում: Այս տարի
ընտրված նոր վարչութիւնը, կամենալով աւելի
լայն ծաւալ տալ ընկերութեան գործունէու-
թեան եւ չը բաւականանայ միայն անհատական
նպատակներ տալով կարօտեալներին, մշակել է
մի նոր ծրագիր: Նոր վարչութիւնը հարկաւոր
է համարել մի յատուկ չըջարեալանք ուղար-
կել թիւրքիայի հայաբնակ քաղաքները՝ զոտ-
չայնելու գաղթականութեան վտանգներից: Եր-
ջարեալանքի մի եւ նոյն ժամանակ իմանում
ենք, որ մարտի 8-ին (յ. տ.) մի երեկոյթ
պէտք է տրվէր ի նպատակ ընկերութեան ֆրանսի-
ական նշանաւոր պատգամաւոր զէնթուրնէլ
զը Կոնստանդնուպոլսի ընտրվել «L'empire»,
«Figaro» թերթերի խմբագրապետները, մի
քանի սենատորներ, պատգամաւորներ եւ գեա-
պաններ:

—Դուրքինից հաղորդում են «Patrie» լրա-
գրին, թէ այն տեղեկութիւններով, որոնք
ստացված են Սիւզո կոմսութիւնից, ժողովրդ-
րական յուզումները կողմ վրա պայանա-
կան բնաւորութիւն են անստանում: Իրանդացի
հայրենասէները պատրաստ են խօսքից դործի
անցնելու. երկուց են կրում, որ ժողովուրդը
չստով կը դիմէ զէնթի օդնութեան Մօս օ-
րերումս գիւղացիների մի խումբ, բողքն էլ
United Irish League-ի անդամներ, հաւաք-
վեցին Կոստայլայի դպրոցում, չը նայելով որ
անգլիական իշխանութիւնները խտրել արգելի
էին այդ միտինգը: Լսելով մի քանի ճառախօս-
ների, որոնք միաբան պահանջում էին զինա-
ւորված կուսակցի Անգլիայի դէմ, ներկայ ե-
ղողները ուղեւորվեցին հարեւան գիւղը՝ ընդ-
հատելով գիւղիկայ լուծութիւնը պատանական ա-
ղաղակներով: Ամբողջ ճանապարհին նկատեց
մի քանի ոստիկանական գործակալների եւ
սկսեց հրացան արձակել նրանց վրայ: Բայց այս
անգամ զինվորով իրանց զեկալարների պա-
հանջին, ցոյց անողները ցոյցեցին իրանց տները
եւ բաւականացան միայն թշնամական ցոյցեր
անելով Գոգը եղաղակներին ապարակի առաջ, որ
ենթարկվեցին թէ բոլորի միջոցով: Այս ցոյցերին մաս-
նակցող իրանդական պատգամաւոր Զօն Գոյ-
զէն ձերբակալվեց եւ բանտարկվեց երեք ա-
րաթով: Պատիժներից չը խուսափեցին եւ միւս
ցոյց անողները: Անգլիական կառավարութեան
դրութիւնը Իրանդիայում հետզետէ աւելի
կրիտիկական է դառնում: Կարծում են, որ
մօտ ապագայում Իրանդիան կը գրաւէ իր
վրա ամենի ուշադրութիւնը:

—«Moniteur Oriental» լրագրին գրում են
Թաւրիզից, թէ Պարսկաստանի առեւտրական
շուկաները ծանր ճգնաժամին մէջ են: Հայկա-
կան շատ առեւտրական տներ իրանց անակ
յայտարարեցին: Պարսկաստանը հեղեղում է
օտարերկրեայ ապրանքներով, որոնք մեծ մա-
րամբ մնում են չը վաճառված: Ապրանքների
արտահանութիւնն եւս նշանաւոր չափով նուա-
զել է, իսկ բանկային գործերը գոտարացել են:
Հնար չը գտնելով վաճառելու պահեստներում
ամբարված ահազին բանակութեան ապրանք-
ները, օտարերկրեայ առեւտրական տները եր-
կարատեւ կրկրելու են զոտ անում ոչ միայն
տեղական խոշոր վաճառականներին, այլ եւ
մանր խանութպաններին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

23 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Փետրվարի 23-ին, 2 ժամ 30

բօլէին կէսօրից յետոյ, լուսնարկան էմիրը եւ
էմիրի ժառանգը ընդունվեցին Նոցա Մեծու-
թիւններից հրաժեշտի ունկնդրութեանը:

ՊԱՐԻԶ. Պատասխանելով անգլո-եւսաֆական
դաշնագրի վերաբերեալ հարցապնդումին՝ Դէլ-
կասէ յայտնում է, որ դաշնագիրը չէ կարող

փոխել Յրանսիայի քաղաքականութիւնը հետո:
Արեւելքում: Յրանսիական քաղաքականութիւնը
ձգտում է պաշտպանել Ձիւստանի անձեռնմխե-
լիութիւնը:

ԿԱՆՈՒԳԱ. Կարուգա ժամանց երկրագործու-
թեան միջնադար Երմօլ:

ՍԱՆՖԱՆԿԱ. Հայ հասարակութիւնը տօնա-
խմեց Գօգօլին՝ կարգաւոր Գօգօլի կենսագրու-
թիւնը եւ նրա գրաւածքների թարգմանութիւնը
հայերէն լեզուով:

ԿՐՕՆՇՏԱՒՏ. Այսօր բոլոր եկեղեցիներում
հողեհանգիստներ կատարվեցին Կայսր Ալէք-
սանդր III-ի համար:

ԿԱՆՈՒԳԱ. Երկրագործութեան միջնադար
այցեւեց գիւղատնտեսական պահեստը եւ աշ-
խատութեան տունը:

ԲԱՊՈՒ. Շամայիւր կոմիտէի ցուցակի հա-
մաձայն, վեապիցն 126 գիւղեր 9081 տներով,
վեապիցին 11 եկեղեցիներ, 41 մզկիթներ եւ
127 խանութներ, սպանված են 86 մարդ, 33
ձիեր եւ 282 գլուխ մեծատաւար: Շամայիւր
այսօր ձիւն եկաւ Ցուրտ է:

ԼՕՆԴՕՆ. Բաննէյրմանի հարցապնդումին, զին-
ւորական միջնադար Բրօքլիկ պատասխանեց, որ
վերջին երկու ամիսների ընթացքում անձնա-
տուր եղած բօլէների բազմաթիւ լինել թոյլ
է տալիս յուսալու, որ կարելի կը լինի կրճա-
տել զօրքերի թիւը ինն ամսվայ ժամանակա-
միջոցից աւելի վաղ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Փետրվարի 23-ին Նոցա Կայ-
սերական Մեծութիւններ Թաղաւոր Կայսրը,
Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդօրովնա, Մեծ
Իշխանները եւ Մեծ Իշխանուհիները այցեւեցին
երեսներով չարժեքական պատկերահանդէսը: Թա-
գաւոր Կայսրը, Մեծ Իշխանները եւ Մեծ Իշխանու-
հիները այցեւեցին նոյնպէս գեղարուեստական
ցուցահանդէսը Պետերբուրգի նկարիչների ըն-
կերութեան պատածի դահլիճներում:

Փետրվարի 23-ին, երեկոյան 6 ժամին, Պե-
տերբուրգից ճանապարհը ընկաւ Սալտա բու-
խարական էմիրը իր ժառանգի հետ: Այսօր բու-
խարական էմիրին հրաժեշտի այցելութիւններ
արին զինւորական միջնադար եւ Տուրկիստանի
զինեալ նահանգապետը:

Այսօր, ի Տէր հանգուցեալ Կայսր Ալէքսանդր
III-ի ծննդեան տոնակից օրվայ առիթով, Պե-
տրպալովսկի առճարում կատարաւ մատուց-
վեց եւ հողեհանգիստ պատարվեց:

25 փետրվարի

Կ. ՊՈՒԼՍ. Անուանի անձանց կայանաւորու-
թիւնները բազմապատկում են. ձերբակալված
են զինւորական միջնադարութեան հետեւակ
զօրքի զեպարտամէնսի գիւրկուոր Կասիմ-
փաշա եւ ընդհանուր շտաբի բաժանումների
հրամանատար Շաքիր փաշա: Թագաւորում է
անվտանգութեան ընդհանուր զգացմունք եւ
փոխադարձ կասկած:

ՀՕՆԿՕՆԳ. Կվանդի նահանգի պատասխանները
հասան Կաիւր կետին, որ 80 մղոն հեռու է
Կուսնգ-Չուանից, յարձակվեցին մանաթրիւնների
վրա եւ, յաղթելով նրանց, ազատեցին բան-
տարկեալներին, որոնք միացան պատասխանների
հետ: Ասում են, որ «Երեւակ միութեան ընկե-
րութիւնը» պատասխանների հետ ձեռք ձեռքի
տուած է գործում գիւղերում կողոպուտներ
անելու եւ հրդեհներ գցելու ժամանակ:

ՇԱՄԱՆԻ. Առաջին անգամ երկրաշարժից
յետոյ սկսվեց ժամասացութիւն Շամայիւր
հետեւակ գնդի բարակում, որ կառուցված է
զօրքերի հրամանատար իշխան Գ. Ս. Գոլիցինի
աջակցութեան շնորհիւ: Երեք վերջի բարձրու-
թեամբ ձիւն եկաւ: Զօրքերը եւ քաղաքացիները
վրաններում եւ ազգաբնակչութեան միայն ան-
նշան մասն են ապահով շինութիւններում: Ժո-
ղովուրդը թափառում է: Ստանալանքը գիւղե-
րներ հասնում է մինչեւ 8 ստիճան:

ԻԺՆԵՏԱԻԼԿ. Յուզումներ է գցել վաճա-
ռականների մէջ գրամական ժողովարարութիւ-
նը ի նպատակ իրր թէ Պետերբուրգի մի բարե-
գործական հիմնարկութեան, որ արկ է իրան
զենեալ Պլէց անուանող մէկը եւ նրա ուղե-
կիցը հաւաքված է 780 րուբլի:

ՎՐՕՆԵՎ. Շիլիտիցի ժառանգները զիջե-
ցին Վերսալիանիկի եւ Վորիչնիկի գիւղերի
գիւղացիներին, Բորբովսկու գաւառում, 5600
դէսետին սեւահող, գետեալներ հարիւր րուբ-
լով, փոխանակ 160 ր. գին: Դիւղացիները եկե-
ղեցում մաղթաւք կատարեցին եւ որոշեցին
կախել վօթստնօի վարչութեան մէջ Շիլիտիցի
եւ նրանց հաւատարմութեամբ մէջ Շիլիտիցի
կերները:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻԻՍ-ԱԶԱՄԱՆԵԱՆ

